



ԺՄՆԵՐՄԵ ԺՄԾՁՐՆՈՒՆԻՍՏԱՆԻ ԻԾՆՈՒՄԻ ՊԵՏԱԿԱՆ ՄԵՇԻՑԻ
ԾԾՅՄ

No 980-Ա/Ք

23 նոյեմբերի 2015թ.

**ԼՐԱՑՈՒՑԻՉ ՈՒ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ
ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ, ՈՉ ՖՈՐՄԱԼ ԵՎ ԻՆՖՈՐՄԱԼ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ԳՆԱՀԱՏՄԱՆ ՈՒ ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ,
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՂ ԵՎ ՕԺԱՆԴԱԿՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆԸ ԵՐԱՇԽԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1062-Ն որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը, ինչպես նաև ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 11-ի N 954-Ա/Ք հրամանով հաստատված կարգի 8-րդ կետը և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2015 թվականի նոյեմբերի 20-ի 976-Ա/Ք հրամանով ձևավորված հանձնաժողովի եզրակացությունը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Լրացուցիչ ու շարունակական կրթության կազմակերպման և իրականացման, ոչ ֆորմալ և ինֆորմալ ուսուցման արդյունքների գնահատման ու ճանաչման համակարգերի գործարկումը համակարգելու, կազմակերպելու և օժանդակելու համար ընտրված համարել Ուսուցման ազգային հիմնադրամին:

2. ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի և տեղեկատվության վարչության պետ Ա. Բաղդասարյանին՝ եռօրյա ժամկետում հրապարակել մրցույթի արդյունքները:

3. Հրամանի կատարման հսկողությունը վերապահել ՀՀ կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավարի պարտականությունները կատարող Ն. Հարությունյանին:

ԱՐՄԵՆ ԱՇՈՏՅԱՆ